2022-2023 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ
CONCOURS D'ENTREE 2022-2023

Հասարակագիտություն / Sciences sociales

(Իրավաբանական ֆակուլտետ / Faculté de Droit)

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ

Առաջադրանքի կառուցվածքն ու սկզբունքները

Քննական հարցաթերթը բաղկացած է երեք հատվածներից:

1-ին հատվածում (1-60-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր:

2-րդ հատվածում (61-70-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը:

Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է երկու միավոր:

3-րդ հատվածում (71-75-րդ հարցեր) բաղադրյալ հարցեր են՝ բաղկացած չորս ենթահարցերից: Պահանջվում է աղյուսակի աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև նշել ճիշտ կապերն ու համապատասխանությունները: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասանը՝ չորս միավոր:

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: *Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:* *Միայն պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:*		
1.	Նշվածներից ո՞րն է իրավունքի ներպետական աղբյուր Հայաստանում.	ա/ սանկցիա բ/ նորմատիվ իրավական ակտ գ/ համաձայնագիր դ/ զեկուցագիր
2.	Իշխանության ո՞ր ճյուղն է ընդունում և իրականացնում ենթաօրենսդրական ակտեր.	ա/ գործադիր իշխանությունը բ/ օրենսդիր իշխանությունը գ/ դատական իշխանությունը դ/ ճիշտ են բոլոր պատասխանները

3.	Սահմանադրությունը որպես հիմնական օրենք ունի.	ա/ հիմնադիր և հիմնարար բնույթ բ/ կանխող և դաստիարակող բնույթ գ/ զրկող և պատժող բնույթ դ/ վերականգնող և հատուցող բնույթ
4.	Ո՞րը օրենսդրական գործընթացի փուլ չէ.	ա/ օրենսդրական նախաձեռնության փուլ բ/ օրինագծի քննարկման և ընդունման փուլ գ/ ընդունված օրենքի մեկնաբանման փուլ դ/ ընդունված օրենքի ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ
5.	5-րդ դարում Հայաստանը փոխառեց.	ա/ Լեհահայոց դատաստանագիրքը բ/ Ասորա-հռոմեական դատաստանագիրքը գ/ Աստրախանի հայերի դատաստանագիրքը դ/ Ճիշտ են ա և գ պատասխանները
6.	Պաշտպանի մասնակցությունը գործին սկսվում է գործի՝	ա/ նախնական քննության պահից բ/ հետաքննության պահից գ/ դատական նիստը սկսվելու պահից դ/ պաշտպանը չի մասնակցում գործին
7.	Փաստաբանական պալատը՝	ա/ ստորադասության մեթոդով կառուցված կազմակերպություն է բ/ անկախ կազմակերպություն է գ/ ինքնակառավարվող կազմակերպություն է դ/ ճիշտ են բ և գ պատասխանները
8.	Ո՞րն (որո՞նք) է Սահմանադրական դատարանի դերը պետական մարմինների («հակակշռող և զսպող լիազորությունների» միջոցով) հավասարակշռման իրականացման գործում:	ա/ ապահովում է Սահմանադրության գերակայությունը բ/ ապահովում է մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը գ/ ապահովում է մարդու բարեկեցությունը դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
9.	Ո՞ր սկզբունքի համաձայն է ամբաստանյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված մեղադրող կողմի վրա.	ա/ մեղավորության կանխավարկածի համաձայն բ/ արդարացիության կանխավարկածի համաձայն գ/ անմեղության կանխավարկածի համաձայն դ/ իրավականության կանխավարկածի համաձայն
10.	Ո՞ր դատարանն է լուծում հանրաքվեների հետ կապված վեճերը.	ա/ Սահմանադրական դատարանը բ/ Ընդհանուր իրավասության դատարանը գ/ Վճռաբեկ դատարանը դ/ Վերաքննիչ դատարանը
11.	Քաղաքացիական գործով վերաքննիչ բողոք բերած անձը բողոքը կարող է հետ վերցնել.	ա/ մինչև վերաքննիչ դատարանը կսկսի գործի քննությունը բ/ գործի քննության ընթացքում գ/ չի կարող հետ վերցնել դ/ մինչև գործի ավարտը
12.	Ո՞ր մարմնն է կատարում ամուսնության պետական գրանցումը.	ա/ նոտարիատը բ/ քաղաքացիական դատարանը գ/ քաղաքացիական կացության ակտերի պետական

		գրանցում իրականացնող մարմինը դ/ հոգաբարձության մարմինը
13.	Պետական գրանցման ենթական են.	ա/ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքները բ/ ոչ գույքային իրավունքից բխող գործարքները գ/ կենցաղային գործարքները դ/ բանավոր պայամավորվածությունները
14.	Ինչպիսի՞ պայմանների դեպքում կարող է կնքվել պայմանագիրը։	ա/ երբ կողմերը համաձայնության են հասնում պայմանագրի բոլոր էական կետերի վերաբերյալ բ/ երբ կողմերի համաձայնությունն իր ձևով համապատասխանում է պայմանագրի ներկայացվող պահանջներին գ/ ցանկացած պայմանագիր համարվում է կնքված միայն նոտարի կողմից վավերացնելու դեպքում դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
15.	Տուժողի առողջությանը կամ կյանքին պատճառված վնասի հատուցման չափը մեծանում է.	ա/ նվազագույն աշխատավարձի չափը բարձրանալու դեպքում բ/ տուժողի ցանկությամբ գ/ երկրի տնտեսական զարգացմանը համընթաց դ/ բանկային տոկոսի հաշվարկային դրույքով
16.	Ո՞րն է ժառանգության բացման օրը.	ա/ ժառանգատուի մահվան օրը բ/ ժառանգության իրավունքի վկայագիր տալու օրը գ/ ժառանգի կողմից ժառանգության ընդունման օրը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
17.	Ստորև նշվածներից ո՞րը գրավոր գործարքի ձև չէ.	ա/ հասարակ գրավոր գործարք բ/ պետական գրանցման ենթակա գործարք գ/ նոտարի կողմից վավերացրած գործարք դ/ փոխանակման գործարք
18.	Սահմանափակ գործունակ անչափահասը գործարքներ կնքում է.	ա/ ինքնուրույն բ/օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ գ/ դատարանի վճռով դ/ չի կարող գործարք կնքել
19.	Անգործունակ ճանաչված քաղաքացու ներկայացուցիչը.	ա/ խնամակալն է բ/ հոգաբարձուն է գ/ պատրոնն է դ/ ծնողն է
20.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է հանդիսանում տարածաշրջանային պայմանագիր.	ա/ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966) բ/ Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966) գ/ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան (1981)

		դ/ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր (1789)
21.	Հելֆորդ Մաքինդերի տեսության հիմնական գաղափարները շարադրված են.	ա/ «Պատմության աշխարհագրական առանցքը» զեկուցման մեջ բ/ «Պետությունը որպես կենսաձև» աշխատության մեջ գ/ «Պատմության ուսումնասիրության դյուրին մեթոդը» աշխատության մեջ դ/ «Պատմության մասին» եռահատոր աշխատության մեջ
22.	Համաձայն ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Հոլբախի՝ «Պատերազմն օրինական և անհրաժեշտ է միայն այն ժամանակ».	ա/ երբ վտանգված է ազգի բարեկեցությունը բ/ երբ մղվում է այլ պետության ոչ իրավաչափ գործողությունների դեմ գ/ երբ մղվում է պետության զբաղեցրած տարածքը ընդարձակելու համար դ/ երբ մղվում է որոշակի քաղաքական նպատակների իրագործման համար
23.	«Ինքնիշխանություն» եզրույթն ըստ էության նշանակում է.	ա/ անսահմանափակ իշխանություն բ/ պետական իշխանություն գ/ գերագույն իշխանություն դ/ հանրային իշխանություն
24.	Իրավական կարգավորման ո՞ր ձևն է առկա օրինակում. Պետական մարմինները գրանցում են անշարժ գույքի նկատմամբ մարդկանց սեփականության իրավունքը/տալիս են սեփականության իրավունքի վկայական։	ա/ իրավաստեղծ բ/ իրավակիրառ գ/ իրավապահպան դ/ իրավապաշտպան
25.	Պետության խնդիրները և գործառույթները.	ա/ նույնական են բ/ փոխկապակցված են գ/ քարացած են դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
26.	Պետությունն օժտված է.	ա/ գերակայությամբ և ինքնիշխանությամբ բ/ հավասարությամբ և մարդասիրությամբ գ/ անհակասականությամբ և անկողմնակալությամբ դ/ անսահմանափակ իշխանությամբ
27.	Պետական հարկադրանքն ունի.	ա/ կամայական բնույթ բ/ հայեցողական բնույթ գ/ իրավական, որոշակի բնույթ դ/ համընդհանուր բնույթ
28.	Ըստ անհատների ակտիվության աստիճանի՝ քաղաքական գիտակցության և վարքագծի տեսակ է.	ա/ Սոցիալապես ակտիվ քաղաքական գիտակցությունը և վարքագիծը բ/ հարմարվողական քաղաքական գիտակցությունը և վարքագիծը գ/ օտարված քաղաքական գիտակցությունը և վարքագիծը

		դ/ Բոլոր պատասխանները ճիշտ են
29.	Ու՞մ կողմից մշակվեց ժողովրդավարական սոցիալիզմի գաղափարը.	ա/ Էդուարդ Բեռնշտայնի բ/ Կարլ Մարքսի գ/ Իմանուել Կանտի դ/ Ջոն Քեյնսի
30.	Մասնավոր իրավունք է.	ա/ սահմանադրական իրավունքը բ/ վարչական իրավունքը գ/ քրեական իրավունքը դ/ քաղաքացիական իրավունքը
31.	Հրամայողական կամ իմպերատիվ իրավական մեթոդը կիրառելիս.	ա/ կողմերը չունեն վարքագիծ ընտրելու իրավունք բ/ կողմերը ունեն վարքագիծ ընտրելու իրավունք գ/ կողմերն ունեն բարձր իրավագիտակցություն դ/ կողմերը իրենք են որոշում իրենց վարքագիծը
32.	Ո՞րը միապետության տեսակ չէ.	ա/ դուալիստական բ/ դասային ներկայացուցչական գ/ խորհրդարանական դ/ արիստոկրատական
33.	Հետևյալ դատողություններից ո՞րն է սխալ։	ա/ փաստաբանն իրականացնում է իրավական խորհրդատվություն բ/ փաստաբանը կազմում է իրավական փաստաթղթեր գ/ փաստաբանը չի մասնակցում նախաքննությանը դ/ փաստաբանն իրականացնում է ներկայացուցչություն դատարանում
34.	Մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության հարցով Սահմանադրական դատարան կարող է (են) դիմել.	ա/ մարդը բ/ մարդու իրավունքների պաշտպանը գ/ դատարանները դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
35.	Ո՞ր դատարանն է քրեական գործերով իրականցնում մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն.	ա/ Ընդհանուր իրավասության դատարանը բ/ Սահմանադրական դատարանը գ/ Վերաքննիչ դատարանը դ/ Վճռաբեկ դատարանը
36.	Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերով ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում.	ա/ 15-օրյա ժամկետում բ/ հրապարակման պահից գ/ հրապարակման պահից մեկ ամիս հետո դ/ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը
37.	Իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով Սահմանադրական դատարան կարող է (են) դիմել.	ա/ դատարանները և գլխավոր դատախազը բ/ տարածքային կառավարման մարմինը գ/ գլխավոր դատախազն ու նրա տեղակալները դ/ քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմինը

38.	Ընդհանուր իրավասության դատարանը գործը քննում է.	ա/ միանձնյա բ/ կոլեգիալ՝ հինգ դատավորի կազմով գ/ կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով դ/ պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով
39.	Պայմանագիրը, որով քաղաքացին պարտավորվել է չզբաղվել ձեռնարկատիրությամբ, իրավաբանորեն.	ա/ վավեր է բ/ անվավեր է գ/ առոչինչ է դ/ վիճահարույց է
40.	Սուեզի ջրանցքը հսկայական չափերով կրճատում է ջրային ճանապարհը.	ա/ Խաղաղ և Հնդկական օվկիանոսների նավահանգիստների միջև բ/ Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների նավահանգիստների միջև գ/ Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների նավահանգիստների միջև դ/ Հարավային և Ատլանտյան օվկիանոսների նավահանգիստների միջև
41.	Ներկայացված տարբերակներից ո՞րն ազատականության հիմնական գաղափարներից և սկզբունքներից չէ.	ա/ իշխանությունների բաժանում բ/ համընդհանուր ընտրական իրավունք գ/ հասարակության աստիճանակարգություն դ/ հավասար հնարավորություններ
42.	Ու՞մ է պատկանում այն միտքը, որ պետությունները պետք է ընդունեն «անխախտելի միջազգային սկզբունքներ», որոնք կերաշխավորեն ռազմական հոսպիտալների և բուժանձնակազմի իրավական պաշտպանությունը.	ա/ Ժան Ժակ Ռուսո բ/ Անրի Դյունան գ/ Կարլ ֆոն Կլաուզևից դ/ Թոմաս Հոբսը
43.	ԼՂՀ-ում ե՞րբ է ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և պետական անկախություն հռչակելու հարցով անցկացվել հանրաքվե.	ա/ 1991 թ. սեպտեմբերի 21 բ/ 1991 թ. դեկտեմբերի 10 գ/ 1988 թ. փետրվարի 20 դ/ 1989 թ. դեկտեմբերի 1
44.	Դատավարական ընթացակարգային հարցերը կարգավորում են.	ա/նյութական նորմերը բ/ենթաօրենսդրական ակտերը գ/վարույթային նորմերը. դ/ճիշտ պատասխանը բացակայում է
45.	Իրավաչափ վարքագծի համար նախատեսված նորմերը կոչվում են.	ա/ արգելող բ/ իրավապաշտպան գ/իրավունակ դ/ կարգավորիչ
46.	Տուգանքը /իրավախախտման համար/	ա/ ֆիզիկական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է բ/ կազմակերպական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է գ/ հոգեբանական պատասխանտվության անբարենպաստ

		հետևանք է դ/ գույքային պատասխանատվության անբարենպաստ հետևանք է
47.	Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն.	ա/գործին մասնակցող անձինք բ/դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում գ/գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործը ըստ էության լուծող ակտ դ/ճիշտ են բոլոր պատասխանները
48.	*Հարցը չեղարկվել է: Բոլոր դիմորդներին գրանցվում է 1 միավոր:*	
49.	Քրեական գործով կատարում է նախնական քննություն.	ա/դատարանը բ/փաստաբանը գ/ոստիկանությունը դ/ճիշտ պատասխանը բացակայում է
50.	Մեղադրանքի գործառույթ իրականացնող չէ.	ա/դատախազը բ/ փորձագետը գ/տուժողի օրինական ներկայացուցիչը դ/ տուժողը
51.	Քաղաքացիական իրավունքի սուբյեկտների արատներով գործարքները կապված են.	ա/ քաղաքացու գործունակության հետ բ/ քաղաքացու իրավունակության հետ գ/ գործունակության և իրավունակության հետ դ/ճիշտ պատասխանը բացակայում է
52.	Երեխան.	ա/իրավունակ է բ/գործունակ է գ/գործունակ և իրավունակ է դ/ճիշտ պատասխանը բացակայում է
53.	Պատրոն նշանակում է.	ա/ խնամակալության մարմինը բ/ հոգաբարձության մարմինը գ/ խնամակալության և հոգաբարձության մարմինները դ/ հիվանդ քաղաքացու համաձայնությամբ, խնամակալության և հոգաբարձության մարմինները
54.	Որդեգրում կարող են իրականացնել.	ա/ միայն երեխայի արյունակից ազգականները բ/ միայն երեխայի հետ արյունակցական առնչություն չունեցող անձիք գ/ միայն կողմնակի անձիք դ/ երեխայի արյունակցական հարազատները, ինչպես նաև կողմնակի անձիք
55.	Եվրոպայում տարածքային վեճի խաղաղ լուծման օրինակ է.	ա/ Աուզուն բ/ Տրիեստը գ/ Տիրանան դ/ Տոլեդոն
56.	Հայաստանի առաջին	ա/ Հայ առաքելական եկեղեցուն հավատարմության

	հանրապետությունում պետական կառուցակարգը կազմավորվել է.	սկզբունքով բ/ կենտրոնացման սկզբունքով գ/ բազմակուսակցական քաղաքական համակարգի սկզբունքով դ/ այլախոհության սկզբունքով
57.	Ու՞մ վրա է դրված խաղաղության և միջազգային անվտանգության համար գլխավոր պատասխանատվությունը.	ա/ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բ/ Ազգային անվտանգության խորհրդի գ/ ՆԱՏՕ-ի դ/ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության
58.	Ո՞վ է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հեղինակը.	ա/Ալավիկի որդի Դավիթ բ/ Հովհաննես Օձնեցի գ/ Մխիթար Գոշ դ/ Լիպարիտ Սպարապետ
59.	Մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմումը ներկայացնելը անհրաժեշտ է.	ա/ նախապես դիմել տվյալ երկրի արդարադատության նախարարություն բ/ նախապես դիմել տվյալ երկրի նախագահին գ/ նախապես սպառել ներքին պաշտպանության միջոցները տվյալ պետությունում դ/ չպահպանել վաղեմության ժամկետը
60.	Արցախի նախարարական տան նախահայրը եղել է.	ա/Առանշահիկը բ/ Վաչագան բարեպաշտը գ/ Եսայի Հասան Ջալալյանը դ/ Առանը

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:
Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ <u>2 միավոր</u>:
Միայն պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:

61.	Քրեական դատավարության ո՞ր փուլի խնդիրն է պարզել, թե կան արդյոք բավարար հիմքեր քրեական հետապնդում սկսելու համար.	ա/ քրեական գործի հարուցման փուլ բ/ նախաքննության փուլ գ/ հետաքննության փուլ դ/ դատական քննության փուլ
62.	Քաղաքացու իրավունակությունը.	ա/ բոլոր քաղաքացիների համար տարբեր է բ/ բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես գ/ ծագում է քաղաքացու չափահաս դառնալու հետ մեկտեղ դ/ կարող է սահմանափակվել շահագրգիռ անձի դիմումի հիման վրա՝ դատարանի վճռով
63.	Ինչպե՞ս կարող է կազմվել կտակը.	ա/ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով կազմվելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի կողմից և վավերացվի նոտարի կողմից բ/ կտակը կարող է կատարվել բանավոր

		գ/ կտակարարը առնվազն հինգ չափահաս անձանց ներկայությամբ միանշանակորեն հայտնում է իրեն պատկանող կոնկրետ գույքը կոնկրետ անձի ժառանգելու մասին դ/ եթե կտակարարը անգրագիտության պատճառով չի կարող անձամբ շարադրել կտակը, ապա այն կազմվում ներկայացուցչի կողմից
64.	Ռեալ պայմանագիրը համարվում է կնքված.	ա/ պայմանագրով նախատեսված գույքը հանձնելու պահից բ/ օֆերտան ուղարկելուց հետո դրա ակցեպտը փոստին հանձնելու պահից գ/ պայմանագրի տեքստի տակ նոտարական կնիք դնելու պահից դ/ օֆերտան ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից
65.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ:	ա/ Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ բ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի իրավաբանական անձի կարգավիճակ ունենալու կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված լինելու հանգամանքը գ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը դ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները
66.	Ստորև նշված մտքերից ո՞րն ընկած չէ Իմանուիլ Կանտի առաջադրած ծրագրի հիմքում.	ա/ կառավարման հանրապետական ձևի տարածումը կնշանավորի միջազգային խաղաղության դարաշրջանի հաստատումը բ/ պատերազմների հիմնական պատճառը պետությունների միջև նոր հարաբերություններ հաստատելու ձգտումն է գ/ ստեղծել պետությունների միջազգային միություն, որում յուրաքանչյուր պետություն իրեն ազատ կզգար և չէր խանգարի մյուսի զարգացմանը դ/ պատերազմը քաղաքականության շարունակություն է այլ միջոցներով
67.	Աշխատանքային պայմանագրի դադարեցման համար անհրաժեշտ է.	ա/ադմինիստրացիայի դիմումը բ/աշխատողի հրամանը գ/կողմերից մեկի կամ կողմերի մտադրությունը ամրագրող իրավական փաստաթուղթ դ/ճիշտ պատասխանը բացակայում է
68.	Ո՞վ է «Հասարակական դաշինք» աշխատության հեղինակը, և ե՞րբ է այն հրատարակվել.	ա/ Իմանուիլ Կանտ,1795թ. բ/ Ժան Ժակ Ռուսո,1762թ. գ/ Իմանուիլ Կանտ,1785թ. դ/ Ժան Ժակ Ռուսո, 1742թ.

69.	Ո՞վ է «Գիրք դատաստանի» աշխատության հեղինակը, և ե՞րբ է այն հրատարակվել.	ա/Մխիթար Գոշ,1184 թթ. բ/Մխիթար Գոշ,1150 թթ. գ/Լիպարիտ սպարապետ,1184 թթ. դ/Լիպարիտ Սպարապետ,1150 թթ.
70.	Ո՞ր երկու իրավունքի նորմերը ունեն հարկադրանք.	ա/իրավազորող և արգելող բ/արգելող և իրավապահպան գ/արգելող և պարտադրող դ/իրավազորող և պարտադրող

Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ

Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև: Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո գետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը:

Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ չորս միավոր:

71. Համապատասխանեցնել հասկացությունը բովանդակության հետ:

1. պարտքի ներում	ա/ կողմերը համաձայնվում են հին պարտավորությունները փոխարինել նորով, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ
2. նորացում	բ/ պարտատերը պարտապանին ազատում է իր պարտքից
3. հրաժարագին	գ/ այս հիմքերով պարտավորությունը դադարում է, եթե կատարումը չի կարող տեղի ունենալ առանց նրանց անձնական մասնակցության կամ այլ կերպ անխզելիորեն կապված է նրանց անձի հետ
4. պարտապանի կամ պարտատիրոջ մահը	դ/ կողմերի համաձայնությամբ պարտավորությունը կարող է դադարել՝ կատարման փոխարեն դրամ վճարելով, գույք հանձնելով

1	2	3	4

72. Համապատասխանեցնել մելիքությունները դրանցում իշխող տոհմերին:

1. Դիզակ	ա/ Մելիք-Բեգլարյաններ
2. Խաչեն	բ/ Հասան-Ջալալյաններ
3. Ջրաբերդ	գ/ Մելիք-Իսրայելյաններ
4. Գյուլիստան	դ/ Մելիք-Եգանյաններ

1	2	3	4

73. Համապատասխանեցնել փաստաթուղթը դրա ընդունման տարեթվին:

1. ՄԱԿ–ի կանոնադրություն	ա/ 1787 թ.
2. Եվրոպական սոցիալական խարտիա	բ/ 1966 թ
3. ԱՄՆ սահմանադրություն	գ/ 1945 թ.
4. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր	դ/ 1996 թ..

1	2	3	4

74. Համապատասխանեցնել պետության ներքին գործառույթը դրա խնդրին:

1. Բնապահպանական գործառույթ	ա/ «իրավախախտների բացահայտում»
2. Իրավական գործառույթ	բ/ «ժողովրդի գենոֆոնդի պահպանում»
3. Սոցիալական գործառույթ	գ/ «ազգի համախմբում»
4. Կրթամշակութային գործառույթ	դ/ «բնակարանային շինարարություն»

1	2	3	4

75. Համապատասխանեցնել պետություններն և դրանց միջև եղած վիճելի տարածքները:

1. Գոլանի բարձրունքներ	ա/ Հունգարիա և Ռումինիա
2. Սաարի մարզ	բ/ Իսրայել և Սիրիա
3. Սիլեզիա	գ/ Ֆրանսիա և Գերմանիա
4. Տրանսիլվանիա	դ/ Գերմանիա և Լեհաստան

1	2	3	4